

Փարիզ³⁸, եւ Սէն Տընիի թագաւորական դամբանարանին մէջ թաղուեցաւ³⁹:

Միութեան այսպիսի փորձ մը փորձեց նա եւ Յովհաննէս Ի Բ Բաճանայապետն, եւ Հայոց Առաքանդին Բ Աթողիկոսն եւ Աւշին թագաւորն ի միութիւն յորդորեց: 1316ին յԱտանա գումարեալ ազգային ժողովոյն մէջ երկուքն ալ միութեան կողմն անցան⁴⁰: Երկրին մեծամեծներն թէեւ թագաւորին եւ կաթողիկոսին կողմն ելան, սակայն ժողովուրդն միութեան դէմ կեցաւ: Ասոր ապացոյց էր Գոմինիկեան Հարց ապարդիւն ջանքերն, ի մասնաւորի Յովհաննու Գառնեցւոյ եւ Բարթողիմեայ Պօլոնիացւոյ, որոնք՝ բաց ի կիլիկիոյ քանի մը գիւղերէն, համակրող չգտան⁴¹:

Նաեւ Նախիջեւան⁴² քաղաքին մէջ Գոմինիկեան Հարք հաստատուած էին, եւ իրենց առաջնորդը՝ Արքեպիսկոպոս միացեալ Հայոց տիտղոսն ունէր⁴³:

Միութեան այս փորձերն ազգին մէջ այնպիսի հակառակութիւն յարուցին⁴⁴, որ Ատանայի ժողովքէն ետեւ՝ կրօնաւոր թագաւորն շեթում Բ⁴⁵, Լեւոն Գ⁴⁶, եւ Առաքանդին Գ⁴⁷, որ վերջին Հայ թագաւորներէն մին է, սպանուեցան. իսկ կի թագաւորն սաստիկ հալածուեցաւ: Գէպքեր՝ որոնց հիմն այն էր, որ այս թագաւորք Հայ եկեղեցւոյն մէջ լատին ծէսեր մուծանել փորձեցին:

Անգութ հալածանքն, որ այս վարմանց կ'ընկերանար, լատին ծէսերու բռնութեամբ վաւերացումը եւ Մամլուք տէրերու ժողովրդեան